Պարույր Սևակ

Դու այսպես ես եղել

Քո արյան և քո շինարար մուրճի
Հետքերն է կրում այստեղ ամեն քար:
Ջուլալ ջրերըդ նման են խղճիդ.
Քեզ քաջ են կոչել, կոչել են տկար,
Բայց ոչ... տիրակալ:
Դու մերթ զարկվել ես, մերթ զարկել չարին,
Քեզ մերթ գերել են, նվիրել իրար:
Դու մերթ եղել ես անհաղթ ու արի,
Մերթ դաժան եղել, մերթ մեղմ ու բարի,
Բայց ոչ... անիրավ:
Քեզ այսպե՜ս գիտի թշնամիդ անգամ.
Մի ձեռքիդ՝ սուսեր, մի ձեռքիդ՝ մանգաղ,
Մերթ ճարտար գրիչ, մերթ՝ փորագրիչ,
Մերթ՝ օրինապահ, մերթ՝ աղանդավոր,
Միշտ՝ տաղանդավոր...

14.XI.1950թ.
Երևան